# Արձանագրություն թիվ 1

2018 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ Ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Մարինե Քոչարյանը, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Ջոյա Գևորգյանը:

## Օրակարգում՝

1. 2018-2019 ուստարվա խնդիրներն ու անելիքների և դասարանի ծնողխորհրդի նախագահի ու անդամների ընտրության հարցը:
2. Դասագրքերի վարձավճարները, դրանց հավաքագրումն ու հանձնումը:
3. Ընթացիկ հարցեր (կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1. Լսեցին- .2018-2019 ուստարվա խնդիրներն ու անելիքների և դասարանի ծնողխորհրդի նախագահի ու անդամների ընտրության հարցը:

Դասղեկ Մարինե Քոչարյանի ելույթը,ով ներկայացրեց 2017-2018 ուստարում 11-րդ <<Բ>> դասարանի կատարած աշխատանքները և ներկայացրեց նոր՝ 2018-2019 ուստարվա խնդիրներն ու անելիքները: Նա նշեց,որ դասարանի համար կարևորագույն խնդիրներից մեկն է նաև 11-րդ դասարանների միավորումը: Սա հոգեբանական նուրբ գործընթաց է, որը պետք է կատարվի սահուն, փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտում:

Առաջարկվեց նոր, վերակազմավորված դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով:

Որոշեցին.

1.Նախագահի թեկնածու առաջադրել և վերահաստատել Լուսինե Հովհաննիսյանին,
2.Աննա Հայրապետյան/ անդամ/
3.Կարինե Շահբազյան /անդամ/
4.Հասմիկ Հարությունյան/անդամ/
5.Անժելա Աբրահամյան /անդամ/

2.Լսեցին.- Դասագրքերի վարձավճարները, դրանց հավաքագրման ու հանձնման հարցը:

Դասղեկ Մարինե Քոչարյանը նշեց,որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ

միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում:.Դասղեկը հորդորեց ծնողներին՝սերտ կապ պահպանել ուսուցիչների և դպրոցի հետ,ինչը կխթանի ճիշտ ու արդյունավետ կազմակերպել սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը:Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել անհրաժեշտ գրենական պիտույքներ,նշված ժամկետում սկսել և ավարտել դասագրքերի վարձավճարները: Դասղեկը ներկայացրեց, որ դասագրքերի վարձավճարները ,հավաքագրումն ու հանձնումը գրադարանավարուհուն՝ կատարվում է ծնողական խորհրդի նախագահի և անդամների միջոցով:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր և գրենական պիտույքներ, կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարերի հավաքագրումը:.Դասագրքերի վարձավճարների հավաքագրումն ու հանձնումը կատարել ժամանակին՝ համապատասխան ցուցակով:

3.Լսեցին.-Ընթացիկ հարցեր/կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ Մարինե Քոչարյանը նշեց, որ նոր ուսումնական տարում դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով /9-00--15-00/: Նա հորդորեց ծնողներին հետևել իրենց երեխաներին հավուր պատշաճի հաճախեն դպրոց: Պահել ծնող-դասղեկ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Հաշվի առնելով այն,որ սովորողները ավարտական փուլում են, պետք է առավելագույնս ուշադիր լինել նրանց հաճախումներին, դասերին պատրաստվածությանը և աշակերտավայել կարգապահությանը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ / /Հովհաննիսյան Լուսինե
Քարտուղար՝ / /Շահբազյան Կարինե